

Աղբիւրի յաւելուած

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 25 կիրակի 6 յուլիսի | ութերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրէմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր ֆոտօ-գրաւիւր պատկերը, 2) *Մայրիկի անձարանում*, մի շքեղ խրոմօ (սպառուած), 3) *Ոսկէ հղմանների*, կամ *Հարեմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդաներ, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 r. (արտասահման 4 r. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 r. (արտասահման 10 r. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Արաքսը խառնւում է Կուր գետի հետ. (Պատմով անցեալը)։

ԹԷՈԴՈՐԱ

Պատմական վէպ Ի. Ֆիօրենտինիի

(*Շարունակութիւն* *)

XXXVIII

ԴԱՐՁԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԹԷՈԴՈՐԱՅԻ ՄՕՏ

Մի քանի օրից յետոյ կայսրուհի Թէոդորայի մօտ ընդունելութիւն կար, բայց քչերը արժանացան համբուրելու նրա սուրբ ոտքերը. ամենից առաջ ընդունեցաւ Մակեդոնիան՝ Չէրիլլոյի կուրտիզանը: Ներս մտնելով նա ծնկաչոք ընկաւ կայսրուհու առաջ:

—Քեզ Թագուհի, քեզ, քո անսահման ողորմածութեանն եմ ես պարտական ամեն ինչով: Իմ դատը տարայ: Դատաւոր Լիւչիանոն, ինչպէս դու հրամայել էիր, ինձանից ստացաւ Պրոպոնդիտէում դտնուող դղեակը,—ասաց նա:

Կայսրուհին բարեհաճութեամբ ժպտաց և շնորհաւորեց կուրտիզան կնոջը ցանկութիւնները կատարելուն համար: Յետոյ արձակելով Մակեդոնիային, հրամայեց կանչել իր մօտ դատաւոր Լիւչիանոյին:

Ծերունին իսկոյն ներկայացաւ, ըստ սովորութեան ծունկ իջնարհելով, նա համբուրեց կայսրուհու հողաթափի ծայրը և շնորհակալութիւն յայտնեց այն ընծայի համար, որ ստացել էր Մակեդոնիայից:

—Լաւ,—ասաց նրան Թէոդորան,—յուսով եմ որ դու քննեցիր Բասիլանոյի յանցանքները:

—Թագուհի, այն յանցանքները, որոնց համար նրանց մեղադրում ես, չ'ապացուցուեցան: Նա պնդում է որ անմեղ է և բոլոր տանը դտնուղները ու ծառաները էլ միևնոյնն են ասում:

—Իսկ դու նրանց ենթարկեցիր տանջանքի:

—Ամենախիստ, Թագուհի, և չընայելով դրան, մեղադրեալներից ոչ մէկը չդիմեց իր ցուցմունքը:

—Նրա համար, որ տանջանքները բաւականաչափ ուժեղ չէին: Ես քեզ խորհուրդ եմ տալիս տանջել «եղան ջլով». գիտես այդ ինչպէս են անում: Յանցաւորի ճակատը այնքան ամուր կապում են նրանով, մինչև որ աչքերը դուրս են թափւում իրանց տեղից: Շատ քչերն են դիմանում դրան: Ես համոզուած եմ, որ եթէ դու դրծ դնես եղան ջլի բասիլանոյի վրայ, նա ամեն բան կդիւոստովանի: Փորձիր, ես անպատճառ ուզում եմ, որ նա դատապարտուի:

Վերջին խօսքերը Թէոդորան արտասանեց առանձին արտայայտութեամբ. միևնոյն ժամանակ մի նշան արաւ, որ ուղղակի ասում էր դժբախտ Լիւչիանոյին, որ եթէ հզօր կայսրուհու կամքը չկատարուի, ինքը Լիւչիանոն կդղիւոստուի:

Դատաւորը երկրորդ անգամ համբուրեց սուրբ ոտքերը և հեռացաւ:

Լիւչիանոյի հեռանալուց յետոյ, կանչեցին Մակեդոնիային, որին Թէոդորան ասաց.

—Ես փեսացու եմ գտել աղջկադ համար, հարուստ Սատուրնինոյին:

—Ո՛, Թագուհի, որքան ողորմած ես դու:

—Ուրեմն պատրաստուիր աղջկադ հարսանիքի համար:

—Բայց մի՞թէ Սատուրնինոն յայտնել է արդէն իր ցանկութիւնը:

—Է՛հ, այդ միևնոյն է, ես ցանկանում եմ, ուրեմն այդպէս էլ պէտք է լինի:

Մակեդոնիան խորը ողջունելով՝ ուրախութիւնից չգիտէր ինչ անէր:

Կուրտիզան կնոջից յետոյ, ներքինիները բերին կայսրուհու սենեակները ալեզարդ ծերունի պատրիկ Թէոֆիլոյին:

Նա հազիւ կարողանում էր կատարել սովորական ծէսը, այսինքն համբուրել հրամանատար կնոջ սուրբ ոտքերը: Նրա խնդիրը հետևեալն էր: Մայրաքաղաքի յայտնի վաճառականներից շատերը և սեղանաւորները պարտ էին նրան պարտամուրհակներով և Թէոֆիլոն չէր կարողանում ստանալ փողերը, որովհետև կուսակալ Բարսամէն նրա պարտապանների կողմն էր պահում:

—Քեզ Թագուհի,—ասաց ծերունի պատրիկը,—ես եկել եմ խնդրելու քո պաշպանութիւնը և ողորմածութիւնը: Դու այնքան բարի և ամենակարող ես, ինչպէս ինքը նախախնամութիւնը. դու կրկասկանաս դժբախտ ծերունուս աղերսանքները: Մտածիր, ով մեծ Թագուհի, ինչ դրութեան մէջ եմ ես, պատրիկս, որ ամենաանհրաժեշտ կարիքի մէջ եմ: Ամեն մէկը կարող է փող գտնել, փոխառութիւն անել, բայց ոչ պատրիկը, որին ամենքը համարում են հարուստ և ամենակարող: Եւ եթէ նա կարօտ լինի վարկի, նրա բարի անունը և արժանաւորութիւնը կարող են ոչնչացած համարել: Չէնց այդ պատճառով էլ ես վճռեցի դիմել ձեզ, մեծ Թագուհի: Ես պարտքեր ունեմ, ես պարտաւոր եմ վճարել, նամանաւանդ պարտատէրերս ինձ դատապարտում են: Սրանից կարող ես հասկանալ, մեծ հրամանատար. այն փողերը, որ ինձ պարտ են, ինձ շատ հարկաւոր են: Այն ինչ, ինչպէս ես քեզ հաղորդեցի, կուսակալ Բարսամէն, թագցնելով պարտատէրերիս, խանգարում է ինձ ստանալ պարտամուրհակներով: Օգնիր, ով Թագուհի—վերջացրեց իր խօսքերը պատրիկը, գլուխ խոնարհելով:

Քմծիծաղ ժպիտը հազիւ նկատելի եղաւ Թէոդորայի քնքոյշ շրթունքների վրայ: Պատրիկը բողոքում էր կուսակալ Բարսամէի, Թէոդորայի թանգագին սիրահարի վրայ, որ այնքան հմտութեամբ կարողացաւ կատարել իր օգոստափառ հրամանատարի բոլոր ցանկութիւնները, այնպիսի ցանկութիւններ, որոնք շատ թանգ էին նստել Կոստանդնուպոլսի բնակիչներին: Թէոֆիլոն վերջացրեց իր խնդիրը և

*) Տես Տարազ № 24.

գլուխ խոնարհած սպասում էր օդոստափառ կայսրուհու վճռին, բայց ոչ մի վճիռ չըկայացաւ, Թէոդորան լռութիւն էր պահպանում: Մի քանի րոպէից յետոյ յանկարծ նա արտասանեց՝ *պատրիկ*: Դրանից անմիջապէս յետոյ քսան ներքինի երգեցին մի ինչ որ անհամ երգ: Դժբախտ խնդրատուն շատ մնացել էր և ոչ մի կերպ չէր կարողանում վճռել, թէ արդեօք սա ինչ նշագահանդէս է և ինչպէս կարող էր նա լինել կայսրուհու սենեակներում ընդունելութեան ժամանակ: Ապրի և իջեցնելով իր այեղարդ գլուխը՝ Թէոֆիլոն վճռեց սպասել երգի վերջանալուն, բայց չըյաջողեցաւ այդ նրան: Չէնց որ լռեցին ներքինիները, բարձրացաւ Թէոդորայի *պատրիկ* երդախօսութիւնը: Ձայները նորից միանում էին և այդպիսով նշագահանդէսի վերջը չէր նկատւում: Դժբախտ Թէոֆիլոն պատրիկը, որին վերջը ամաչեցրին, ստիպւած էր հեռանալու:

Նրանից յետոյ անմիջապէս ներս մտաւ Թէոդորայի նախկին ընկերուհի կուրտիզան Իզիդորան, որ շատ լաւ հագնւած էր:

—Ի՞նչ կասես, իմ սիրուն Իզիդորա, հարցրեց նրան Թէոդորան: Ի՞նչու է աչքերիդ արտասուք: Աչքերդ ինձ յիշեցնում են մեր երիտասարդութեան ժամանակը, մեր կեանքի ախորժելի ժամերը:

—Օ՜, Թագուհի, ես կանանցից ամենադժբախտն եմ, պատասխանեց նախկին կուրտիզանը, սրբելով աչքերը:

—Ասա, ուրեմն բարեկամ, ինչ կայ:

—Ամուսինս... ասաց Իզիդորան և նորից արտասւեց:

—Ա՜խ, դու ամուսին ունե՞ս: Ես այդ չըգիտէի:

—Այո՛, Թագուհի, և կարծեմ նա ձեզ անյայտ չէ:

—Բայց այդ միևնոյն է, ինչ կայ, ասա ինձ:

—Օ՜, Թագուհի, դրութիւնս սարսափելի է: Ամուսինս ինձ մեղադրում է դաւաճանութեան մէջ:

—Նա բողո՞քել է դատարանում:

—Այո՛, Թագուհի, բողոքել է դատարանում և ես կորած կին եմ:

—Ի՞նչ է նրա բողոքելու պատճառը:

—Ես նրան դաւաճանեցի, բայց միայն մէկ անգամ, երդւում եմ ձեզ, Թագուհի, միմիայն մէկ անգամ...

—Բայց օրէնքի համար այդ էլ բաւական է, նկատեց ժպտալով կայսրուհին: Ամուսինդ ապացոյցներ ունի՞:

—Ունի, Թագուհի:

—Ուրեմն, անկասկած դու կըդատապարտւես.

—Ի հարկէ, եթէ դուք չըպաշտպանէք ինձ, Թագուհի:

—Ի՞նչ կարող եմ անել ես այս դէպքում:

—Բոլորը՝ ինչ կամենաք:

—Սակայն, սիրելիս, չեմ կարող ես հրամայել դատաւորներին:

—Թէպէտ կարող էք հրամայել, բայց կայ մի ուրիշ միջոց էս:

—Այսինքն:

—Հրամայել ամուսնուս, որ իր բողոքը յետ վերցնի:

—Այո՛, բայց ասա՛ ինձ մանրամասն, բանն ինչումն է:

—Ես արդէն յայտնեցի ձեզ, Թագուհի, որ ամուսինս անհերքելի ապացոյցներ ունի իմ յանցանքիս համար,—աղաղակեց ողբալով Իզիդորան, ծնկաչոք ընկնելով կայսրուհու առաջ:

—Լաւ, սիրելիս, վեր կաց, մի լաց լինի: Մի քանի օրից յետոյ պալատում մեծ հանդէս կըլինի, ես կըհրաւիրեմ քեզ և քո ամուսնուն, կարելի է մի բան յաջողեցնենք: Ա՛ռ այժմ հեռացիր:

Իզիդորան մինչև գետին խոնարհելով գլուխը, դուրս եկաւ:

Դրանից յետոյ Թէոդորայի աչքին մի գաղտնիմաստ նշան երևեցաւ, որ ցոյց էր տալիս թէ եկել է իր մերձաւոր հաւատարմատարը:

Այս անգամ երևան եկաւ Ջուզեպպէն:

—Թագուհի,—աղաղակեց նա,—Սիլոնը մեռաւ և Պլոգինէսը ժառանգական իրաւունքների մէջ մտաւ:

—Ո՞րքան է:

—Ահագին: Ես հետևել եմ նրան և ինձ յաջողեցաւ իմանալու, որ Պլոգինէսը վատ գործերով է պարապում:

—Ասա, ինչ տեսակ գործերով,—իսկոյն հարցրեց Թէոդորան:

—Նա հետազօտում է աստղերը և խորհրդակցում աստղագէտների հետ:

—Այո՛, մեծ յանցանք է:

—Նրան դատապարտելու համար նրա բոլոր կայքն էլ յատկացնել պետական գանձարանին,—առելացրեց նախկին կառապանը:

—Ի հարկէ—երկարացնելով ասաց Թէոդորան, ժպտալով երեխայի նման: Իսկ ինչ է անում Ջէնոնը:

—Դու նրան նշանակեցիր Եգիպտոսի նահանգապետ, ինչպէս քեզ ես խորհուրդ տւի, յիշո՞ւմ ես: Նա շոգենաւով ճանապարհ ընկաւ: Իմ կաշառած մարդիկը նրան սպանել են և ձգել ծովը, իսկ իր հետ վերցրած բոլոր հարստութիւնները վերցրել են և թաղցրել: Այդ անցքի մասին խօսել անդամ աւելորդ է, որովհետև շոգենաւն էլ այրել են: Դժբախտութիւնը վերագրում են հրդեհին:

—Չնորհակալ եմ—աղաղակեց Թէոդորան, հրպարտութեամբ նայելով իր մանկութեան ընկերոջ վրայ և ձեռք պարզելով նրան: Ջուզեպպէն ջերմ համբուրեց և հեռացաւ:

Թէոդորան, Հռոմի Տիտոս կայսեր նման, կարող էր համարձակ ասել, որ առաւօտը լի դուբ չանցաւ: Բայց Թէոդորայի մտածած խարդախութիւնները և սարսափելի ոճիրները դեռ բոլորովին չէին վերջացել: Կայսրուհու գլխում մէկը միւսից հրեշանման մտքեր էին պտտում:

Դեկտեմբերի 15-ին Ֆրանսիայի նախագահ Ժյուլ Գրեվին ընտրեցին երկրորդ անգամ։

XXXIX

ԿԱՅՍՐԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Մեր նկարագրած անցքերէն յետոյ երեք օր շարունակ կայսրական պալատը և այգին ներկայացնում էին մի արտասովոր տեսարան: Մութ և տաք գիշերը նրանց մէջ հրդեհի նման փայլում էր հրաւառութիւնը: Զանազանագոյն կրակները գեղեցիկ կերպով թափանցում էին Բոսփորի և Պրոպոնդիտէի խաղաղ ջրերում: Լուսնի դեղին գոյնը հաղիւ նկատելի էր մեծ ծառերի կատարներից: Պահակազօրքի զինուորները, որ շարւած էին ճեմելիներում, նման էին յաղթւած ժողովրդներին: Թերակոյտի անդամները վերարկուներով, դքսերը և կոմսերը ոսկեկար թանգագին քարերով զարդարւած թիկնոցներով, ժեներալները հռոմէական նշանագգեստներով, օտարազգի իշխանները՝ հարուստ շորերով, պատրիկներ և մատրոնները մետաքսներում, ոսկում և թաւիշներում զարդարւած, հրաշալի պատկեր էին ներկայացնում: Զինաստանից Եւրոպա բերած մետաքսեղէնները, որ հին ժամանակ գործ էին ածում միմիայն թագաւորները, շատ գործածական էին. կանանց դգեստների համար նոյնպէս գործ էին ածում 400 կղզից բերած բարակ բրդեղէն կտորներ:

Առհասարակ դգեստները աչքի էին ընկնում իրանց ճոխութեամբ և մեծ հարստութեամբ: Կարկեհանները, տպագիտները, մարգարիտները, ադամանդները զարդարում էին այն ժամանակի զարդասէր կանանց և տղամարդկանց շորերը: Ամենից ճոխ ի հարկէ հաղնւած էր Թէոդորան, որ բազմել էր զահին ոսկեկար դահլիճում, իր ամուսնու՝ Յուստինեան կայսեր կողքին: Թէոդորայի զգեստը Իտալիայի Բաւէննա քաղաքի ձևով էր կարւած. նեղ թևքեր, թաւշեայ զգեստի բարձր օձիք, որ գեղեցկացնում էր Թէոդորայի ճոխ կերպարանքը, որի ձեռքին կայնն նաև թանգագին ապարանջանները, իսկ կրծքին արտասովոր մեծութեան մի ադամանդ: Գլխին դրւած էր ձւաձև թագը զուտ ոսկուց, նոյնպէս զարդարւած թանգագին քարերով:

Բոլոր հրաւիրւած հիւրերը կարդով ներկայանում էին օգոստափառ տանտիկիններին ողջունելու: Պարող զոյգերը նմանւում էին Բիւզանդիոնի կայսրութեանը հպատակ իտալացի, գաղղիացի, իսպանացի, յոյն և ափրիկացի ժողովուրդներին: Երաժշտութեան նւագախմբերն էլ ներկայացում էին զանազան ազգութիւններ: Պարերի վերջանալուց յետոյ, որոնց մենք չենք նկարագրիլ, անկարող լինելով կարելոյն չափ գոնէ քիչ ծանօթացնել ընթերցողներին այն պարերի մասին, որ գոյութիւն ունէին հնագոյն ժամանակներում, կայսրը և կայսրուհին իր մօտ ունենալով կայսերազն իշխան Փերմանոյին իր աղջիկ Յուստինայի հետ, Կամիտոնային Անաստազիոս որդու հետ և առանձին ողորմութեան շնորհիւ ժեներալ Բելիզարիոսին նրա Անտոնինա ամուսնու և աղջիկ Ջիովանինայի հետ, ոսկեկար դահլիճից անցան սեղանատուն, ուր ամենաշքեղ կերպով պատրաստած էր մի ահագին սեղան, որ վայլում էր ոսկէ ամաններով, ծաղկամաններով և այլն: Հիւրերի առաջ էին Ամբրիայից բերած վարազներ, Նումիդիայից՝ վայրենի թռչուններ, Արշիպելագոսից՝ սիրամարգներ, Գալմատիայից՝ այծեր, Քաղկեդոնից ահագին մեծութեամբ ձկներ, Պոնտոսի ազգեր ձկներ, Տարանտոյից՝ ոստրէներ, Վենաֆրոյից՝ ձիթապտուղներ և այլն, և այլն: Մեծ բաժակներում ածւած էին. Սամոսի, Կիոսի և Կիպրոսի գինիք: Միով բանիւ սեղանի վրայ դրւած էր այն ամենը, ինչ որ իր ժամանակին լաւագոյն և գեղեցիկ բան արտադրում էր աշխարհը:

Ընթրիքի ժամանակ, Թէոդորայի դէմքը տրխրեց: Այն միտքը թէ իր բարեկամուհի Անտոնինան մի առանձին հիացմունքով չէր ընդունում իր Ջիովանինա աղջկայ ամուսնութեան լուրը, զբաղեցնում էր կայսրուհուն: Նա սովոր չէր, որ իր ողորմածութիւնները մի առանձին հիացմունքով ընդունէին ստորադրեալները: Ինչպէս մեզ յայտնի է, Անտոնինան, թէպէտև չէր համարձակւի մերժել ամենակարող կայսրուհուն, բայց նրա առաջարկութիւնը սառն ընդունեց: Ձքեղ խնճոյքից յետոյ, կայսրը և կայսրուհին վեր կացան և բոլոր հրաւիրւած հիւրերը թողին սեղանատունը և սկսեցին ցրւել կայսերական պալատի ահագին սենեակներում և հոսփորի ափին փռւած տաւերաշատ այգիներում:

Այգու շատրւաններից մէկի մօտ Թէոդորան շշնջաց իր քոյր Կամիտոնիայի ականջին և նորից մօտեցաւ պատւաւոր հիւրերին: Այն ինչ Յուստինեան կայսրը զբօսնում էր իր սիրելի բարսամէ կուսակալի հետ, զարմանալով թէ որտեղից կարող էր նա ձեռք բերել այդքան փող այդպիսի շքեղ տօնախմբութեան համար:

—Ասա, բարեկամ,—ասաց, ժպտալով կայսրը, որտեղից ես վերցրել փողը, իմ սեփական գանձարանից:

—Երբէք: Ձերդ մեծութեան գանձարանին ձեռք չէ դիպել:

—Ուրեմն որտեղից ես վերցրել փողերը, գարձեալ ես քեզ հարցնում եմ:

—Երկնքից Թափւեցան,—պատասխանեց կուսակալը:

—Ա՜, ուրեմն ես այսօրւանից քեզ կանւանեմ երկնային, ասաց կայսրը կատակ անելով:

Բայց փողերը ոչ թէ երկնքից էին թափւել, ինչպէս հաստատում էր կուսակալը, այլ Կոստանդնուպոլսի խեղճ բնակիչների արտասուքներով վաստակած փողերն էին: Կամայականութեան, բռնութեան, գանազան անօրէնութիւնների, կամ ուղղակի բացարձակ թալանելու օգնութեամբ Թէոդորայի սիրելին փող էր հաւաքել բնակիչներից շքեղ տօնախմբութիւն սարքելու համար:

Այն ինչ Թէոդորան անհանգիստ աչքերով հետևում էր երիտասարդ պատրիկ Սատուրնինոյին և դեղեցիկ իշխանուհի Յուստինային: Փէրմանոյի աղջիկը չափազանց դեղեցիկ էր և վեհանձն: Բարձրահասակ, դեղեցիկ կազմւածքով, դէմքի կանոնաւոր և արտայայտող գծագրութեամբ, երկար ու շէկ մազերով նա դեղեցկուհու տիպար էր ներկայացնում:

Սատուրնինոն սաստիկ սիրեց նրան. դեղեցկուհին իր կարգին նոյնպէս պատասխանում էր նրա զգացմունքին: Երիտասարդ պատրիկը դիւանագիտութիւն ունէր ամուսնանալ Յուստինայի վրայ, բայց երևան եկաւ մի խոչընդոտ յանձին կայսրուհի Թէոդորայի: Ռնանակալ կնոջը չերհակառակելու նպատակով Սատուրնինոն այցելեց Մակեդոնիային և ուղղակի յայտնեց նրա աղջկան, որ տրամադիր չէ դէպի նա, պատճառաբանելով, որ սիրում է ուրիշին: Սիրահարւածները զբօսանքի ժամանակ պալատական այգում յանկարծ մօտեցաւ Սատուրնինոյին Թէոդորայի ուղարկւած ներքինին և յայտնեց, որ կայսրուհին կանչում է նրան:

—Նա ուզում է մեզ բաժանել, շշնջաց Յուստինան երիտասարդի ականջին:

—Ոչ ոք չի կարող աշխարհիս երեսին բաժանել ինձ քեզանից, իմ աղաւեակ,—պատասխանեց Սատուրնինոն և ուղևորւեց ներքինիի հետ կայսրուհու մօտ:

—Դու, Սատուրնինո, խնդրե՞լ ես Իրէնայի ձեռքը, հարցրեց Թէոդորան, յանդգնաբար դննելով ոտից մինչև գլուխ ամաչկոտ երիտասարդին:

—Դեռ ևս ոչ, թագուհի,—պատասխանեց Սատուրնինոն:

—Էլ ի՞նչու ես ուշացնում. միթէ իմ զուտծ հարսնացուն բաւականաչափ գեղեցիկ և չքնաղ չէ:

—Ընդհակառակը, թագուհի... շփոթւած պատասխանեց երիտասարդը:

—Ուրեմն ի՞նչու է գործը դանդաղել: Ահա, ի դէպ գալիս է նաև Մակեդոնիան իր աղջկայ հետ:

Թէոդորան նշան տւեց, որ մօտենան նրանք:

—Ես պատրաստ եմ կատարելու ձերդ մեծութեան հրամանը, - ասաց Մակեդոնիան, յարգանօք ողջոյն տալով, այն ինչ նրա աղջիկը, համեստութեամբ իջեցրած աչքերը, նոյնպէս սպասում էր, թէ ինչ կասէ օգոստափառ հրամանատարը:

—Մակեդոնիա,—սկսեց հանդիսաւոր կերպով Թէոդորան, այստեղ ներկայ գտնուղ պատրիկ Սատուրնինոն խնդրում է քո աղջիկ Իրէնայի ձեռքը, ի՞նչ կասես դրան:

Անկարելի էր նկարագրել դժբախտ Սատուրնինոյի դրութիւնը, երբ լսեց նա այս խօսքերը, բայց հակառակւել Թագուհուն՝ նա չերհամարձակւեցաւ. գունատւեց, գլուխը իջեցրեց կրծքին և լուռ կանգնած էր, կարծէք մահւան պատժի դատապարտւած լինելով:

—Ձերդ մեծութեան կամքը ինձ և աղջկաս համար օրէնք է,—պատասխանեց ողջունելով Մակեդոնիան:

—Ձատ գեղեցիկ,—շարունակեց յաղթական ժպիտով խստասիրտ Թէոդորան:—Սատուրնինո, Իրէնա, տւէք ձեր ձեռքը,—և այդ ասելով, նա տւեց Իրէնայի ձեռքը Սատուրնինոյին:

—Դէ՛հ, այժմ էլ չըպէտք է խանգարել հարս և փեսային,—ասաց սատանայական ժպիտով Թէոդորան,—դու կարող ես, Սատուրնինո, զբօսնել քո գեղեցկուհու հետ:

Երիտասարդը ուժով նշանած հարսնացուի ձեռքը վերցնելով, գնաց զբօսնելու այգու ճեմելիքները: Մենակ մնալով նրանք, նա ասաց Իրէնային.

—Դուք պէտք է լմանաք, որ իմ ամուսնութիւնը ձեզ հետ ամենակարող Թէոդորայի ցանկութիւնն էր, դրա համար ես չեմ յայտնել իմ համաձայնութիւնը, ուստի ես չեմ կարող բախտաւորացնել ձեզ, որովհետև ես ուրիշին եմ սիրում: Լաւ մտածեցէք, թէ ինչ եմ ասում ես:

Այդ ժամանակ Թէոդորային մօտեցաւ սեղանաւոր Կրէոնտէն, որ հրաւիրւած էր կայսերական տօնախմբութեան: Մակեդոնիան աւելի քաղաքավարի համարեց հեռանալ: Կայսրուհին, ձեռք պարզելով սեղանաւորին և առանձին հաճոյքով թոյլատրելով նրան համբուրելու, ասաց.

—Կրէոնտէ, ես քեզ հրաւիրել եմ տօնախմբութեան, ի նկատի ունենալով օգտւելու քո փոքրիկ ծառայութիւնից:

—Օ՛, թագուհի, դուք միայն հրամայեցէք և ամենայն բան կրկատարէ ձեր խոնարհ ծառան:

—Ես ուզում եմ, Կրէոնտէ, որ դու յետ վերցնես դատարանին ներկայացրած խնդիրդ քո կնոջ դաւաճանութեան մասին:

—Թագուհի, բայց ձեզ յայտնի չէ, թէ ինչպէս նա ինձ վիրաւորել է: Ստոր ստրուկը, որի հետ ես վրայ հասայ նրան...

—Գիտեմ, գիտեմ, իմ թանգագին Կրէոնտէ,—ընդհատեց նրան կայսրուհին,—բայց պէտք է երբեմն ներողամիտ լինել մերձաւորների սխալներին, նամանաւանդ երբ մեր խնդիրն էլ մեղքել է գործում:

—Ներկայումս, թագուհի, ես ոչ մի մեղք չունիմ:

—Ինց չէ, իմ սիրելի Կրէոնտէ—ասում էր Թէոդորան, խորամանկութեամբ ժպտալով: Քո մասին ինձ սարսափելի բան են պատմել, որ քրէական պատասխանատւութեան արժանի է:

—Ի՞նչ էք ասում, թագուհի, զրպարտութիւն է երկւում եմ ձեզ, զրպարտութիւն է:

—Դա ինձ չի վերաբերում,—անտարբերութեամբ շարունակեց Թէոդորան,—դատաւորները կըքննեն՝ մեղաւոր ես, թէ արդար:

—Բայց ես կրցանկալի ձեր առաջ արդար լինել:

Հնդիկ ֆակիրը եւրոպացիների ներկայութեամբ կախարդութիւններ է անում:

—Դա հեշտ է: Յետ վերցրու դատարանին ներկայացրած խնդիրը կնոջդ մասին:

—Եւ այն ժամանակ դուք ինձ անմեղ կը ճանաչէ՞ք այն յանցանքի վերաբերութեամբ, որի մասին ես մինչեւ անգամ հասկացողութիւն չունեմ:

—Ի հարկէ: Այլապէս կարող է պատահել... դու հասկանո՞ւմ ես,—աւելացրեց կայսրուհին:

—Հասկանում եմ, ձերդ մեծութիւն, ես կատարելապէս խոնարհւում եմ ձեր կամքի առաջ,—պատասխանեց ողջունելով սեղանաւորը:

Թէոդորան չդստիպեց կրկնելու խոստումը, նշան տւեց ներքինիին և իսկոյն եկաւ, կարծէք դեռնից դուրս ցցւելով, Կրէոնտէի ամուսինը:

—Բախտաւոր եղէք, իմ թանգագին բարեկամներ, ասաց նա դառնալով նրանց և մօտենալով Կրէոնտէի ականջին, աւելացրեց. «տես, դու ինձ պէտք է հաշիւ տաս կնոջդ հետ ինչպէս վարւելու մասին»:

Բախտաւոր ամուսինները հեռացան: Իսկոյն կանչւեցաւ դատաւոր Լիւչիանոն:

—Կալողացա՞ր, վերջապէս Բասնիանո մեզադրեալի գործը քննել:

—Նա ամեն ինչ խոստովանեց: Այժ չունենալով ձեր առաջարկած սարսափելի տանջանքները տանել, նա ստորագրեց բոլորը, ինչ որ դուք ցանկանում էիք:

—Ե՞րբ պէտք է կայանայ դատավճիռը:

—Երկու օրից յետոյ:

—Իսկ կախաղան բարձրացնե՞լը:

—Հետեւեալ օրը:

—Իմաց տուր ինձ, ես ուզում եմ ներկայ լինել:

Ծօնախմբութիւնը վերջանալու վրայ էր: Հիւրերը հեռանում էին օգոստափառ տանտէրերից: Թէոդորան, անցնելով նւագախմբերից մէկի մօտով, մի հայեացք ձգեց նւագածուների վրայ, որոնք հաւաքում էին իրանց գործիքները և յանկարծ շւարած կանգ առաւ. նրա արտայայտիչ դէմքը ներկայացնում էր զարմանք և միևնոյն ժամանակ սարսափ: Կայսրուհին չէր հաւատում իր սեփական աչքերին. նա նկատեց իր որդի Ջիովաննի Ուրաբոյին:

Բայց կարելի է այդ նա չէ, այլ միայն հասարակ նմանութիւն, մտածում էր Թէոդորան:—Ոչ, նա է, Ջիովաննին, իր որդին, նա նայում է իր վրայ, իր հրաշալի, քնքոյշ աչքերով, կասկած չի կարող լինել: Բայց ինչպէս կարող էր այդ պատահել: Ի՞նչպէս կարող էր նա մտնել կայսերական նւագախմբի մէջ,—մտածում էր ինքն իրան Թէոդորան:—Նա Անտիոքումն էր, իսկ այժմ այստեղ է, Կոստանդնուպոլսում, և ես դրա մասին չդգիտէի:

Երիտասարդ նւագածուն այնպէս քաշուած և քնքոյշ նայում էր կայսրուհու վրայ, որ նա ստիպւած էր իջեցնել աչքերը և շտապել հեռանալու իր սենեակները: Տեսնելով անցնող Մակեդոնիային՝ նա կանչեց իր մօտ և հրամայեց տեղեկութիւններ հաւաքել, թէ որտեղ է բնակւում երիտասարդ սրնգահարը:

(Շարունակելի)

ՀԳԱՑՆԻԿ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(Colloque Sentimental)

Հին պարտիճ մէջէ. սառած միայնակ՝
Երկու ուսերներ սահեցան հիմակ:

Չրթուներին մեղկ են, մեռած՝ աչուրներին
Ու իրանց խօսքերն հազիւ կըլսւին:

Հին պարտէզին մէջ, սառած՝ առանձին՝
Երկու ուրւական անցեալն յիշեցին:

- Կը յիշե՞ս մեր հին հեծանքը նախկին:
- Ինչո՞ւ կուզէ որ խորհիմ այդ բանին:

—Անուս եթէ տան սիրտդ կը զա՞րնէ:
Երազիդ մէջ միշտ կը տեսնե՞ս գիս:—Չէ՛:

—Ա խ, աղուոր օրերն հեծութեան, ուր ես
Կրցէ՞ի շրթուներս բերել քու շրթներիդ:—Թերեւս

—Երկիներն ի՞նչ կապոյտ եւ յոյսն ի՞նչ մեծ էր:
—Յոյսն յաղթած փախաւ, մութ երկինքն ի վեր:

Եւ կերթային խոլ վարսակներուն մէջ
Ու մեծնակ գիշե՞ր խօսքերնին լսեց:

Paul Verlaine

Տ. ՍԼԿՈՒՆԻ

97, Յունիսի 17. Ժընեւ

ԱՆՎԵՀԻՐ ՄՏՔԵՐ

ՍՊԻՆՈԶԱ. Նրա կեանքը եւ վարդապետութիւնը:

I

Երկար և կորստաբեր պատերազմ էր մղում փոքրիկ Հոլլանդիան իր ազատութեան համար: Իսպանացոց կրօնամոլ թագաւորը, Փիլիպպոս II, իր երկարամեայ թագաւորութեան ընթացքում՝ չկարողացաւ արմատախիլ անել բողոքականութիւնը Հոլլանդիայում, չկարողացաւ իր հպատակ Հոլլանդացիներին ստիպել մոռանալ անկախութեան, ինքնուրոյնութեան ձգտումները: Կաթոլիկութեան մոլեռանդ պաշտպան և բռնակալ Փիլիպպոս II մեռաւ վերջապէս, առանց հասնելու իր նպատակին: Իսպանացոց զինուորական ոյժը և խորամանկութիւնը ջարդ ու փշուր եղան Հոլլանդացոց անյողդողդ կամքի և ներքին համերաշխութեան առաջ, և Վեստֆալիան խաղաղութիւնը (1648 թւին) հաստատեց ազատութեան համար կռւող ժողովրդի իրաւունքները: Այնուհետև Հոլլանդիան, որպէս ինքնուրոյն հանրապետական մի երկիր, սկսեց ծաղկել, բարգաւաճել, հարստանալ: Նրա վաճառականութիւնը

այն ժամանակ առաջինն էր աշխարհիս երեսին և Հոլլանդական նաւերը ազատ լողում էին բոլոր ծովերի մէջ։ Վաճառականական և արդիւնաբերական եռացող կեանքի հետ, սկսեց ծաղկել Հոլլանդիայում նաև մտաւոր կեանքը.—Հոլլանդիան այն ժամանակ նշանաւոր եղաւ իր համալսարաններով, գիտնականներով, մտածողներով ու գրողներով։ Ուրիշ երկրներում իրանց գաղափարների համար հալածւած՝ ուսումնական, խելօք մարդիկ և գրողներ Հոլլանդիայում գտնում էին ազատ ասպարէզ՝ տպելու և հրատարակելու իրանց գրւածքները։ Ահա այս նախանձելի դրութեան մէջ էր՝ ծովեզերեայ փոքրիկ Հոլլանդական հանրապետութիւնը դեռ XVII դարու սկզբներին։ Հոլլանդիա եկող գաղթականների մէջ կային նաև շատ հրէաներ, որոնք Իսպանիայում և Պորտուգալիայում կրած հալածանքներից յետոյ այստեղ վայելում էին կատարեալ ազատութիւն և նրանց սինագոգը գտանւում էր եկեղեցուց ոչ հեռու։ Ահա այդ գաղթական հրէաներից մի ազնիւ վաճառականի ընտանիքում, որ ապրում էր Ամստերդամում՝ ծնւեց XVII դարու մեծ մարդը—իմաստասէր Բենեդիկս Սպինոզան։ Նրա մանկութեան մասին հետևեալն են պատմում կենսագիր—պատմաբանները. «Հաճելի տեսարան է պատկերացնել մանուկ Սպինոզային խաղալիս իր քոյրերի հետ։ Նրա դէմքը հեզ և խելացի էր, աչքերը փոքր, բայց լայն, կենդանի և թափանցող։ Նրա թուխ մազերի շքեղ գանգուրները թափւած էին նրա վզի և ուսերի վրայ։ Դուրսը, բացօդեայ տեղում խաղալիս, նա գրաւում էր Ամստերդամի քաղաքացոց ուշադրութիւնը՝ իր գեղեցկութիւնով և ուրախ բնաւորութիւնով։ Այդ այն ժամանակն էր, երբ ամբողջ Եւրոպան հետաքրքրութեամբ դիտում էր հոլլանդացոց. առաջ նրանք հաստատ բնակութիւն ձեռք բերին այդ հողի վրայ՝ խլելով իրանց երկիրը ծովի բերանից. յետոյ վայր գցեցին իրանց վրայից Իսպանիայի ծանր լուծը, իսկ այժմ նրանց մնում էր ազատել մի աւելի խիստ գերութիւնից,—մտաւոր գերութիւնից։ Ամստերդամը մի շատ աղմկալից քաղաք էր։ Բազմաթիւ նաւերի առագաստների ճոնչոցը, նաւաստիների գոռում-գոչունը, մանրավաճառների զբաղւած երթևեկութիւնը՝ մի անզուսպ կենդանութիւն էին տալիս քաղաքին։ Եւ այդ քաղաքային ընդհանուր աղմուկի, ընդհանուր լարւած զբաղմունքի, իրարանցումի մէջ՝ մանկական անհոգ խաղերով գրաււած՝ աճում, զարգանում էր Սպինոզան. նա չէր մասնակցում շրջապատող կեանքի ալէկոծութեանը և շրջապատող կեանքը չէր նկատում նրա գոյութիւնը։ Նա ուրախ և անհոգ խաղում էր իր քոյրերի հետ, առանց մտածելու այն բարձր տիեզերական խնդիրների մասին, որոնց վճռելը յետոյ նրա ամբողջ կեանքի և գոյութեան նպատակը դառաւ. նա չէր վրդովւում այն տաղտկալի հարցերով, որոնց պատասխանել և բացատրել չի կարողանում անհանգիստ ուղեղը, բայց և չի ուզում ընդունել պատրաստի ուրիշներինը»։ Ծնողները փոքրիկ Բարուխին *) պատրաստում էին առևտրականութեան համար, սակայն երեխայի մտաւոր արագ զարգացումը և ուսումնատենչ բնաւորութիւնը աչքի առաջ ունենալով՝ փոխեցին իրանց դիտաւորութիւնը և որոշեցին տալ նրան այնպիսի կրթութիւն, ինչ որ ստանում էին այն ժամանակւայ հրէական բաբբիները։ Այդ որոշումը համապատասխան էր նաև երեխայի ցանկութեանը, որ լինելով նուրբ կազմւածքի տէր, աւելի հակումն էր ցոյց տալիս դէպի ուսումնական պարապմունքը։ Լինելով նուրբ և թոյլ կազմւածքի տէր երեխայ՝ նա սիրում էր անձնատուր լինել մտածմունքների. նա թողւած էր ինքն իրան,—իր մտքերին, իր զգացմունքներին։ Տանջւելիս, նա մտածում էր իր տանջանքի պատճառների մասին, և այն մասին թէ արդեօք ամբողջութիւն է կազմում, և ենթարկւածէ ինքն էլ նոյն ընդհանուր, բնական օրէնքներին,—թէ ինքը բոլորովին անջատւած բնութիւնից՝ կառավարւում է բոլորովին ուրիշ, առանձին օրէնքներով։ Սպինոզան ստանում էր հրէական դաստիարակութիւն, որ սահմանափակւած էր Հին Կտակարանով և Թալմուտով։ Բուռն հետաքրքրութեամբ նա սկսեց սովորել այդ երկու առարկաները, և այդ բանում նա այնքան խոր հասկացողութիւն և նուրբ խելք արտայայտեց, որ միանգամայն զարմանք պատճառեց բաբբինապետ Սաուղին – իր դաստիարակ-ղեկավարին։ Մեծ յոյսեր էին դնում այդ պատանու վրայ։ Տասնըչորս տարեկան հասակում նա արդէն մրցում էր բոլոր գիտնականների հետ և նրանցից յետ չէր մնում՝ Սուրբ Գրքի մասին ունեցած ճիշտ և ընդարձակ տեղեկութիւնների նկատմամբ։ Սակայն ծնողների և դաստիարակների բարձր կարծիքը շուտով փոխւեց պատանի Սպինոզայի մասին, երբ նրանք նկատեցին թէ՝ ինչպիսի յանգուգն հետաքրքրութեամբ նրա պատանեկական խելքը ակսում է ուսումնասիրել ամեն բան, ինչ որ դնում էին նրա առաջ, թէ ինչպիսի համարձակ և դժւարին հարցերով կապում էր բաբբիներին և փիլիսոփաներին, որոնք շատ դժւարանում էին նրա հարցերին պատասխանել։ Սպինոզային չէր կարելի վախեցնել ոչ սպառնալիքով և ոչ էլ սոփեստութիւններով։ Հին Կտակարանի մէջ նա ոչ մի ցուցում չէր գտել հոգու անմահութեան մասին։ Նա ուշադրութիւն դարձրեց դրա վրայ և չէր ծանկում իր կարծիքը ուրիշներից։ Նրա ընկերներից երկուսը, որ սաստիկ նախանձում էին Սպինոզայի առաջադիմութեանը, իմաց տւին բաբբիին նրա հերետիկոսութիւնը։ Սպինոզային կանչեցին սինագոգ բացատրութիւն տալու։ Անհոգ և ուրախ տրամադրութեամբ նա հնազանդւեց այդ հրամանին և գնաց սինագոգ զգալով իր կատարեալ անմեղութիւնը։

ԵՐ. ՂԱԶԱՐԵԱՆ

(Կըճարուճակւի)

*) Բարուխ—Սպինոզայի հրէական անունն է, որ յետոյ ինքը թարգմանեց լատիներէն—Բենեդիկտ։

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

(Կաթիլը Մենդհսից)

Ես հանդիպեցի մի աղխաչ. նա իննամից ողորմութիւն խնդրեց, ես տւի նրան իմ գրպանում գտնւած բոլոր ոսկիները։ Ես հանդիպեցի մի յիմարի, որ կամենում էր իրեօք մարդ դառնալ. ես տւի նրան իմ ցնորքները, իմ հոգեկան նուրբ զգացողութիւնը, նոր եւ խաղցրանիչ յանգեր յօրինելու իմ շնորհքը։ Ես հանդիպեցի մէկ զօրավարի, որ ուղեւորւում էր պատերազմի դաշ-

տը. ես տի ճրաճ ճակատամարտի մակարդակը, որի շնորհիւ ճա յաղթանակեց թշնամուն։

Ես հանդիպեցի մի խմբագրի, որ չըգիտէր ի՞նչ տպագրէր թերթ առաջիկայ համարում. ես տի ճրաճ շատ նորութիւններ, որոնք ճնարել էի ճախանձելիս, հէնց այն ժամանակ, երբ ցրիչ—վաճառողները բարձրաձայն կանչում էին առաւօտեան լրագրերի անունները։

Ես հանդիպեցի մի վախկոտի, որ գնում էր մենամարտելու. ես տի ճրաճ իմ անվրդովելի սառնարիւնութիւնը, իմ յարձակելու արագութիւնը եւ իմ ճարպիկութիւնը պաշտպանելու գործում։

Ես հանդիպեցի մի անաստուածի. տի ճրաճ իմ ճաւատը դէպի աստուածները, որոնց մէջ է յաւերժանում մարդկային միտքն ու բանականութիւնը։

Ես հանդիպեցի մի թշուառ միլիոնատէրի, որ երբէք չէր սիրել, չընայելով որ աշխարհիս երեսին չէր գտնւի մի աղջիկ, որ չընւիրէր ճրաճ. ես տի ճրաճ իմ ուրտի մէջ ծովացած բոլոր ֆինանսութիւնը։

Այն ժամանակ, գրկած ամեն բանեց, ես գնացի *Մատելէնի* մօս։

Իբրեւ վարձատրութիւն իմ արած բարեգործութիւնների, նա թոյլ տւեց ինձ համբուրել իր շրթունքները, եւ ճրա անուշաբոյր ու թաց շրթունքներից ես յեռ վերցի բիւրապատկած իմ ևիրած թանկագին գանձերը՝ *հարստութիւն, ուսաղանդ, ոսգմնագիտութիւն, խելք, քաջութիւն, հաւատ* եւ *սէր*։

ՅՈՐ. ՄՀ.-ՅՈՎՀ.

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՒՈՒՆԸ

—

Ինչպէս որ սպասելի էր, սուլթանը ուզեց օգուտ քաղել այն հանգամանքից, որ պետութիւնների մէջ կարող է անհամաձայնութիւն տեղի ունենալ, եթէ ինքն յամառի եւ պնդի իր պահանջների վրայ, այն է Պինէի սահմանագիծը ստանալ եւ Թեսալիան չըմաքրել, մինչեւ չ'ստացւի պատերազմական տուգանքը, որ պետութիւնները որոշել են չորս միլիօն լիրա։ Այս բանում միայն անգլիական լիազօրը բաժանւեց միւսներից, առաջ բերելով Յունաստանի քայքայւած վիճակը, թէ 3 միլիօնից աւելի նա չի կարող վճարել, և այս հանգամանքը առիթ էր եղել Տաճկաստանին ենթադրելու, թէ պետութիւնների մէջ կարող է անհամաձայնութիւն ծագել, Այժմ դադարած են բանակցութիւնները խաղաղ միջոցներով հաշտութիւն կնքելու մասին։ Ռուս. արտաքին գործերի մինիստրն էլ վերջերս մի նոտա ուղղեց և առաջարկեց, որ սուլթանն ընդունէ պետութիւնների հաշտութեան պայմանները, հակառակ դէպքում հրաւիրում էր պետութիւններին ռեպրեսալական միջոցների դիմելու։ Այժմ սուլթանը նեղն ընկած, կրկին ուզում է վերանորոգել բանակցութիւնները և այդ նպատակով դիմել է հեռագրով պետութիւնների դլուխներին, որ նրանք ի նկատի ունենան նաև Տաճկաստանի շահերը Թեսալիայի սահմանագիծը որոշելու գործում։ Բայց հազիւ թէ սուլթանի այս նոր դիպլոմատական խաղը յաջողութիւն գտնի, ի նկատի ունենալով պետութիւնների միաբան գործակցութիւնը։ Աւստրիայի Ֆրանց-Յոսէֆ կայսրը սուլթանի հեռագրին պատասխանեց, խորհուրդ տալով նրան որքան կարելի է շուտով կնքել դեսպանների առաջարկած հաշտութեան պայմանագիրը, թէ իր սեպհական և թէ Օսմանեան կայսրութեան շահերը ի նկատի առնելով։

Չատ տաճիկ աստիճանաւորներ և մի քանի մինիստրներ այնուամենայնիւ հանգիստ չեն մնում և ագիտացիա են անում Պինէյի սահմանագիծը չըտալուս։ Իբրև թէ տաճիկները իրանց նպատակին հասնելու համար ուզում են յարձակւել դեսպանատների վրայ և վերջիններս ընդունել են զգուշական միջոցներ։ Զերբակալել են վերջերս շատ զինւորական և քաղաքացիական աստիճանաւորներ և շէյխեր։ Բայց այս բոլորը արհեստական ձևով զարթեցրած գրգռմունքների հետևանք են և Տաճկաստանը ի զուր է ձգտում իր վերմակից աւելի ոտները մեկնել. արդէն ժամանակը հասել է իր չափը ճանաչելու...

—

ՆԱՄԱԿ ԼՈՆԴՈՆԻՑ

17 Յունիսի. 97.

Մէկ օր մեռածները պար կըբռնեն, երբ կենդանիները մեռնեն։ Պարադ-ը քս... Չամաձայն եմ, բայց ահա քանի ժամանակ է—հայկական կոտորածներից ի վեր—ինչ այդ պարադ-ը քսը տրաքացնում է գլուխս։ Ընթերցողին կըկանչէի օգնութեան, եթէ նա էլ իր աչքով տեսած լինէր այն զարմանալի բաները, ինչ ես եմ տեսել և լսած լինէր, ինչ ես եմ լսել։ Վկայ եմ բերում աշխարհիս ամեն քրիստոնեայ բարի ոգիներին կամ մեծ տէրութիւններից ոմանց—ինչ միևնոյն բանն է —որ մեռածները կարող են յարութիւն առնել միայն վերջին դատաստանին, երբ արդարների առջև կըբացւեն դրախտի դռները։ Բայց մեր պատրիարք Աշըգեաններին ու Օրմանեաններին եմ թողնում վայելել այն աշխարհի դրախտի վայելքները։ Իմ ասած արդարներն ապագայում յարութիւն կառնեն այս աշխարհի դրախտում, երբ վերջին դատաստանով մեղաւորները կսքսորւեն Սադայէլի գոդը։ Կարող եմ հաւատացնել ընթերցողին, որ ամենահաւաստի աղբիւրներից ինձ յայտնի է, թէ ոչ սուլթանը, ոչ նրա աներ ջարդապետ Զէքքի փաշան և ոչ էլ նրա հարէմի ներքինապետը և կամ աշխարհիս այլ և այլ անկիւնների շատ մեծամեծները երբէք վախ չունեն Սադայէլից, որ նրանց սխրագործութիւնների ամենաանողոք դատաւորն է, բայց և գնահատողը։ Ինչու... Որովհետև այս աշխարհում նրանք արդէն հաստատել են իրանց դրախտը, ուր վայելում են վայելքներ մանե, թեկեղ, Ֆարհս-ի ջահի պայծառ լուսաւորութեան տակ... Սակայն ոչ մի տարակոյս չունիմ, որ աղօթքների յորդառատ հեղեղների գնով իսկ ազա-

տում չունին դժոխքի տանջանքներից... ժուռնալիստները... Ա՛յո, ժուռնալիստները, որոնք պաշտպանում են չարագործներին, մեռածներին հայհոյում են և հզօրներին խնկարկում... Անցեալ օրն իմ բարեկամ բարի Ծերունին հառաչում էր.—«Ափսոս հին ժամանակները... ոչ գրել կարդալ գիտէինք, ոչ էլ լրագրութիւն կար... Հիմա լրագրութեան ախտը մեզ բռնել է. չենք կարողանում չկարդալ և երբ կարդում ենք, ամեն անգամ էլ զայրացած դէն ենք շպրտում լրագիրը... Աշխարհիս իմաստուններ հռչակած և աշխարհիս տէրերի բերան կազմող թերթերն իրանց սուրբ պարտականութիւնն են համարում պաշտպան լինել ամենավատ գործերի և ամենաանարդար դատերի։ Ախար այդպիսի բան կըլինի՞... Իրաւունք է ասել, որ լրագրութիւնն ամբիոն է ամեն յանցանքների ու անիրաւութիւնների»... Բարի Ծերունիի այդ չար խօսքերն ինձ խայթեցին։ Ինքս ժուռնալիստ՝ իմ պատկանած դասի սրբազան զէնքի պատիւն այդպէս անարկելու դէմ պարտականութիւնս համարեցի բողոքել։ Ի հարկէ ընթերցողը գուշակեց, որ իմ բողոքներն իրար վրայ կուտակուեցան շատ բարձր ոճով, ըստ որում չըմոռացայ լրագրութեան սուրբ կոչման մասին խօսելու, նրա կրթիչ նշանակութեան վրայ շեշտելու, նրա գոյութեան ազնւամիտ ու վերին աստիճանի օգտակար նպատակներն ապացուցանելու... բայց Ծերունին չամառեց։ Նա ճգնում էր ինձ հաւատացնել, որ լրագրութեանը կոչում, նշանակութիւն, օգտակարութիւն տուողն ու ազնւացնողը պէտք է մենք, ժուռնալիստներս, լինենք։ «Որովհետև, հարեց, հաւատացեալ մարդու աչքին սրբապղծած պէտք է լինի այն տաճարը, ուր ոտք են դնում, պատարագ ու քարոզ անում, օրինակ, այնպիսի օտարակերներ, ինչպէս մի Յարութիւն, մէկ Աշըգեան, մէկ Օրմանեան»։ Անարկութիւնը իմ դէմ խիստ էր... Բայց ես ինձ յաղթած չըներկայացրի և հայ ժուռնալիստի խասիաթի համաձայն՝ սկսայ հաւի պէս քեփուր-քեփուր գալ և ինչպէս կատու՝ մէջքս գետնով չըտալ...

Սակայն խոստովանում եմ մեղքս. մնացի շարած, երբ այդ խօսակցութիւնից յետոյ սկսայ թերթել զանազան լրագիրներ մեծ ու փոքր, յայտնի և անյայտ. մի լիճնաւոր ընթերցող ունեցող, որպէս և մէկ այնպիսին, որի միակ մշտական ընթերցողն ինքը խմբագիրն է։ Այս վերջին լրագրում՝ հայ խմբագիրը, մի ճիզւիտ աղէսի ոճով, ուզում է հաւատացնել ինձ, ասում եմ՝ ինձ (որովհետև իր միակ ընթերցողն, այն էլ պատահական, միայն ես գըտընւեցայ), թէ սևը սպիտակ է, իսկ սպիտակը՝ սև, թէ գողը նա չէ, որը գողանում է, այլ նա, որից գողանում են, թէ յայտնի դաւաճանները, սուլթանին ստոր և ուրացողի մեղայագրեր մատուցանողները, տաճիկ ոստիկանութիւնից՝ իրանց անխոստովանելի ծառայութիւնների համար՝ ամսականներ ու միանուագ դրամական բաժիններ ստացողները, մեծ տիտղոսների գողացողներն ու կրկչան պաշտօններ իրանց վերագրողները, և այլ այդ տեսակի անհատները, որոնցից մէկը դեռ այսօր էլ, իբրև թղթակից Եւրոպայից, կծկւած է մեր մի լրագրի սիւնեակներում, վնասակար մարդիկ չեն, այլ ճշմարիտ գործիչ, անանի ազգասէր, մեծ հայրենասէր են... Այդ բոլորը կարդալիս՝ աչքերս չռեցի ապշած..— Մի ֆրանսիական լրագրում կարդացի մի բան, որը եթէ ճիշդ չէ, սուտ էլ չէ։ Իբր թէ երբ սուլթանը մտագրեցաւ—դեռ անցեալ տարի—ընդհանուր ճերում ասած բանը շնորհել, նախապէս անգլիացի ու գերմանացի բուրսականների ձեռքով իր անւան գնել տւեց մեծ թւով տաճկական խիստ ցած ընկած արժէթղթեր։ Երբ յետոյ ճերումը շնորհեց, այդ թղթերի գինը բարձրանալով, սուլթանը միանգամից շահեց երեսուն միլիոն ֆրանկ փոքրիկ գումարը։ Ի հարկէ, իրանց մեծ բաժինն ունեցան նաև եւրոպական բուրսականներն ու ֆինանսիստները, որոնց ֆինանսական շահերն ու խաղերն են արդէն վարում Արևմուտքի քաղաքականութիւնն Արևելքում։ Բրնական օրէնք է. տկարների մահը ծառայում է հզօրների աւելի զօրացման. յայտնի դասակարգի համար բանտն ու արիւնն էլ նոյնպէս ֆինանսական շահագործութեան նիւթ է, ինչպէս ֆիզիքական աշխատաւորի քրտինքն ու բանող ոյժը և մտաւոր աշխատաւորի դիտութիւնը կամ տաղանդը։—Մէկ անգլիական լրագրում խորհրդաւոր ոճով գրւած կար, թէ յոյն հարուստ Աւերովեների օրինակին նախանձելով, որոնք իրանց ամբողջ հարիւրաւոր միլիոն կարողութիւնները մեռնգամից նւիրեցին իրանց հայրենիքի պատերազմական ծախսերի և Կրէտէի ապստամբութեան համար, մի քանի հայ հարուստներ երկո՞ւ միլիոնից աւելի իբր թէ պէտք է տան իրանց ժողովրդի ազատման գործին։ Ա՛օտս մի բարեկամ լինելով՝ մինչ ես այդ կարդում էի բարձրաձայն, յանկարծ դրացիիս խոհանոցում կրակի վրայ կարմիր տապակւող մորթած բադը ծիծաղեց... և ես անմիջապէս հասկացայ, որ այն լուրն էլ լրագրական բադ է (canard) եղել։ Որովհետև, եթէ հայ հարստի չետին խելքն ունենար Աւերովի՝ իր փողն անշուշտ, չէր տալ և իր ազգը սարսափելի վտանգի մէջ ընկնելու օժանդակ ու դրդիչ մեկը չէր լինիլ, ինչպէս այսօր։ Հայ հարուստն իր դրամը չըտւած էլ՝ հայ ժողովուրդը սարսափելի օրեր ու տարիներ կրեց. իսկ եթէ դրամը տա՞ր... այն ժամանակն արդէն հայը կատարեալ կորստի կըմատնւէր... Հայց կարող եմ վստահացնել միւս կողմից, որ հայ հարստի դիւրահաւանութիւնը և կամ այլ տեսակի թոյլ կողմը շատ վարպետ կերպով իմացան և գիտեն շահագործել հրապարակային շառլատաններն ու քաղաքական օտարակերները (պարազիտները), որոնք խեղճերին խաբում են... Իսկապէս հայ հարուստն իր նորաձին մանկան վզից էլ յօժարակամ չի կախիլ մի՛ հատիկ իսկ ոսկէ յուռութ։ Այդ չէ խանգարում, հարկաւ, որ նոյն զաւակը մեծացած՝ մէկ օր շռայլութեամբ իր հօր օջախը քանդէ... Մի տխուր, բայց և յուսալից օր իմ լաւ ծանօթներից մեկը քրտինքը կոխած ու սարսափահար հասնում է մի շատ հարուստ հայի տուն և հաղորդում նրան, որ նրա հարազատ որդին աւազակների ձեռքով մորթւելու վտանգի մէջ է, եթէ շուտափոյթ կերպով չըհասցնել յայտնի գումար, որ նրա ազատման պայմանն է։ Հարուստն ամենայն պաղարիւնութեամբ պատասխանում է.—«Թող նախ մորթեն՝ տեսնեմ, յետոյ»...—Մի պաշտօնական լրագրում.—այս մեկը՝ գերմանական—հիացման չօգւած կարզեցաւ, որ սուլթանը սկսել է փայփայել համաիսլամականութեան յաղթանակի երազը և լրագիրը ֆիս-

մարկեան խրոխտ ոճով շեշտում է, թէ մեծ պետութիւնների շահերը թելադրում են աջակից լինել Աբդիւլ-Համիդի այդ մեծ նպատակի իրագործման. ըստ որում, այդպիսով—«Կ'ոչնչանան ըմբոստ տարրերը Տաճկաստանում և խաղաղութիւնը վերջնական կերպով կըհաստատուէ Արևելքում»։ Խորամանկ լրագիրը, տողերի մէջ տեղերում, չընդկաստանի խալամների սովամահ ուրւականներով էր վախեցնում խոժոռ Անգլիային, որ սա զգոյշ լինի՝ իր քաղաքականութեամբ Տաճկաստանում չըշօշափելու Վիլհելմ կայսրի քաղաքականութեան ինքնասիրութիւնը։— Մէկ աւստրիական և, կարծեմ, մէկ էլ մի ռուսական, լրագիրներում խիստ անհանգրվանում են յոյներն ու հայերը, և դա ոչ միայն իբրև նոր հրէաներ, այլ այս վերջինից էլ մի բանով աւելի վատ—իբրև ըմբոստներ։ Եւ ապա նոյն լրագիրները գովում են սուլթանի իմաստութիւնը, որն այսօր ընդհանուր քաղաքականութեան վարիչն է, և մեծ տէրութիւնների արդարասիրութիւնը դէպի Արևելքի փոքրիկ ազգերը, որպէս և դէպի Տաճկաստանի միապետը, և վերջն աւելացնում են այս միտքը. «Յունաստանն իր մեծամտութեան պատիժը կրեց, չաղթեւելով, իսկ հայկական խնդիրն էլ գոյութիւն չունի այլ եւս»...

Ամսիս 22-ին այս ծովաքաղաքում տեղի ունեցաւ Վիկտորիա թագուհու վաթսունամեայ թագաւորութեան ադամանդեայ յոբելեանի հանդէսը, որ կատարուեց չըտեսնուած շուքով։ Այդ թագաւորութեան ընդարձակ շրջանի նշանաւոր դէպքերի շարքում ամենանշանաւոր տեղն են բռնում հետևեալները.—Իռլանդիայի ինքնավարութեան խնդրի հանդիսաւոր թաղումը. յիսունական թւականներին՝ վեց միլիոն, եօթանասնական թւականներին՝ եօթ միլիոն և այս վերջին մի տարւայ միջոցին՝ տասն և մէկ միլիոն—հնդիկների կոտորածը սովից Հնդկաստանում. ապա զանազան ժամանակներ Աֆրիկայի այլ և այլ ցեղերի մէջ արած մեծ ջարդերը, որոնք Տաճկաստանի ձեռքին մէկ անողոք առարկութեան տեղ են ծառայում՝ արդարացնելու համար հայկական ջարդերի գործը. և ամենից վերջ՝ հանգուցեալ Anglo-Armenian ընկերութեան կոկորդիլոսական արցունքները, որպէս և Սոլըզբըրիի եղե-ներով, բայցերով ու կարծեմ-ներով լիքը, նշանաւոր դամբանական ճառերը հայկական խնդրի գլխին...

Simpliste

Դպրոցական

Թագաւոր Կայսրը բարեհաճել է բարձրագոյն հասաստել պետական խորհրդի հետեւեալ որոշումը հայոց եկեղեցական-ծխական դպրոցների, սեմինարիաների եւ Գեորգեան ճեմարանի մասին. Ա) Հայոց եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք միեւնոյն այսօր կառավարւում էին հայ լուսաւորչական հոգեւորականութեան ձեռով, այսուհետեւ պիտի է կառավարւեն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ձեռով, ընդհանուր հիման վրայ, վերապահելով հայ լուսաւորչական հոգեւորականութեան իրաւունքը՝ հսկել մատաղ սերնդի կրօնական կրթութեան վրայ այդ դպրոցներում. Բ.) Այսուհետեւ ազատ կացուցանել հայ կոնսիստորիաները եւ հոգեւոր վարչութիւնները այդ դպրոցների եւ նրանց մէջ դաս տւող ուսուցիչների ցուցակը կազմելու եւ պահելու պարտաւորութիւնից. Գ.) Հայոց հոգեւոր սեմինարիաների եւ հոգեւոր ճեմարանի մասին գոյութիւն ունեցող ծրագիրները պահպանել իրանց նախկին զօրութեան մէջ։

—Վեհափառ Կաթուղիկոսը մեռճեց Ներսիսեան դպրանոցի հիմնիրը, որ դիմել էր բոյլատրելու բանալ VII դասարան, ուր աւանդւեին նաեւ գիւղատնտեսութիւն, առողջապահութիւն եւ մանկավարժութիւն։ Վեհափառը իր մեռժումը պատճառաբանել է նրանով, որ ներկայումս էջմիածնում նոր ծրագիր է մշակւում բոլոր հոգեւոր դպրոցների համար։

—Ներքին գործերի եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրների համաձայնութեամբ կազմւած է նոր ծրագիր հայոց փակւած ծխական-եկեղեցական դպրոցների համար։ Այդ ծրագիրը հնձւած է պետական խորհրդում եւ կըհրատարակւի ուսումնարանական տարւայ սկզբին։

— —

Լուրեր

—

Թիֆլիսի նահանգապետ իշխան Գ. Դ. Ջերաջիձէն յուլիսի 2-ին ուղևորւեց Աբասթուման։

—

Երկրագործութեան և պետական կալւածների մինիստր Ա. Ս. Երմոլով օգոստոսի կիսին կայցելէ Կովկասի հանքային ջրերը և հագւի մօտ գտնւող արքունական հողերը, որոնք նաեւ հարստութիւններ են պարունակում։

—

Վեհափառ Կաթուղիկոսը այցելելով Սեւանը՝ վերադարձաւ էջմիածին և թողել է Տաճիւ գնալու մտադրութիւնը։

—

Յուլիսի 25-ին Պ. Պոլսից ճանապարհ է ընկել Կովկաս Փրանսիայի նախկին կայսրուհի Եւգէնիան։

—

Սիամի թագաւորի մասին համարեա բոլոր եւրոպական թերթերը մեծ համակրանքով են խօսում և համարում են հեռաւոր Արևելքի լուսաւոր միապետներից մէկը։ Նա այցելելով նաև Մոսկան ամսին 28-ին իր թագաժառանգի հետ՝ վերադարձաւ Պետերհոֆ, ուր կայսրանի մօտ նրան դիմաւորեցին Թագաւոր Կայսրը և Մեծ Իշխանները։ Ամսիս 30-ին նա սրտեռանդն ողջոյներ տալով Թագաւոր Կայսրին և Մեծ Իշխաններին՝ հեռացաւ Կրոնշտադտից Ստոկհոլմ։

Նա մտադիր է ճանապարհորդելու Եւրոպայում։

—

Տաճկաց պաշտօնական և հայ լրագիրներում հրատարակւած է տաճիկ չանճնաժողովի տեղեկագիրը Անատոլիայի (այսինքն Հայաստանի. Հոսֆորի ափերի դիպլոմատները վազուց չնջել են այդ բազմայարչար երկրի անունը) վեց նահանգներում բէֆորմներ մըտցնելու մասին։ Տեղեկագրի մէջ ասւած է, որ բէֆորմների մեծ մասը ի կատար են ածւած և թէ միեւնոյն բէֆորմները կըմուծւին և կայսրութեան միւս նահանգներում։

Երանի՛ հաւատացողներին և ոչ երանի չըհաւատացողներին. երևի այս չըհաւատացողները Հայկական կոմիտէտներն են, որոնք սուլթանին հանգըստութիւն չեն տալիս։ Լրագիրների ասելով, առաջիկայում Եւրոպա կ'ուղարկւէ սուլթանի հաւատարմատարը համոզելու նրանց դադարեցնելու իրանց գործունէութիւնը։ Եթէ իսկապէս բէֆորմները մտցրւել է (?) և հետզհետէ էլ մտցրւելու է, էլ ինչու է սուլթանը այդ միջոցին դիմում, քանի որ Հայկական կոմիտէտներն էլ մեծ պետութիւնների մշակած բէֆորմների իրագործումն են պահանջում։

—

Լրագիրները Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նելիդովի հրաժարականի մասին զանազան լուրեր են հաղորդում։ Nord-ն ասում է, թէ լրագիրների խօսակցութեան առիթ է եղել դեսպանի խանգարած առողջութիւնը։

Վերջին պաշտօնական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ճիշտ է Նելիդովի հրաժարման լուրը։ Նա նշանակել է իր ցանկութեամբ Հռոմի ռուսական դեսպանի պաշտօնում։

—

Ռուս. մինիստրութեան օրգան Nord-ը ասում է թէ Կ. Պոլսում տեղի ունեցող բանակցութիւնները հաշտութիւն կայացնելու մասին Տաճկաստանի և Յունաստանի մէջ, չեն դադարել բոլորովին Տաճկաստանում բէֆորմներ մտցնելու խնդիրը, ինչպէս այդ կարծում են Լոնդոնում։ «Ընդհակառակը, մեզ յայտնի է—շարունակում է լրագիրը—այդ հարցը այժմ մեծ պետութիւնների դեսպանների մասնաւոր բանակցութիւնների առարկայ է դարձած և խաղաղութիւնը հաստատելուն պէս՝ Պրանը կրներկայացնի ընդարձակ ծրագիր (ընդգծածը խմբագրութեանս է) Օսմանեան կայսրութեան մէջ գտնուող բոլոր քրիստոնէաբնակ նահանգների համար»։

—

Լոնդոնում անցեալներում տեղի է ունեցել Հայաստանի բարեկամների միջազգային ընկերութեան ժողով, որին մասնակցեցին յայտնի գիտնականներ և քաղաքական գործիչներ։ Այդ ժողովում արտասանուեցին ճառեր, որոնց մէջ ճառախօսները մեծ համակրութիւն էին ցոյց տալիս հայերին և հրաւիրում Եւրոպային Հայաստանի վիճակը բարւոքելու, որովհետև այժմ տաճիկները էլ խմբովին կոտորածներ չեն անում և հայերի ջնջումը կատարւում է գաղտնի կերպով...

—

Լրագիրների ասելով ռուսաց դեսպան Նելիդով և ֆրանսիական դեսպան Կամբոն յուլիսի վերջին (ն. տ.) կրհեռանան Կ. Պոլսից, այնպէս որ յոյնտաճկական խաղաղութեան դաշնագիրը կրկնքւի օգոստոսի սկզբից ոչ ուշ։

—

Ջուշուց մեզ գրում են, որ մինչև այսօր էլ այնտեղ համարեա աշնանային եղանակներ է անում. շարունակ անձրև է գալիս, սենեակում 12-14-R տաքութիւնը չի անցնում։

Դերասանական խմբի անդամներ պ. պ. Պետրոսեան, Աբէլեան, Յարութիւնեան, տ. տ. Մելիքեան և Փառանձեմ եկել են, սկսել իրանց ներկայացումները, սակայն անձրևի և մանաւանդ ոչ հետաքրքիր րեպերտուարի պատճառով յաճախողներ առայժմ քիչ են և ներկայացումը մի անգամ չետաձգւեց։ Անշուշտ լաւ, նոր պիէսներ ներկայացնելուց Ջուշու թատրոնը կունենայ իր նախկին յաջողութիւնը։

—

1896 թվին պատրաստւած են նոր ձևի հարիւր րուբլիանոցներ, որոնք երկար ձևի են և նեղ հնից։ Թղթադրամների վրայ գտնւում են երկու պատկեր Եկատերինա II կայսրուհու, մէկը վերևից, միւսը տողերի մէջ։

—

Զաքաթալում անցեալ ամսում եղած սաստիկ կարկուտը մեծ վնասներ է տւել բնակիչներին. մի քանի գիւղերում փչացել են հացաբոյսերը, այգիները և խոտերը։ Վնասը հասնում է 25 հազար րուբլու։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը անհրաժեշտ է համարել մի տարի ևս յետաձգել Սուխումում հաղաքային հիմնավարութիւն մտցնելու խնդիրը։

—

Մօտիկ ապագայում Փերբենդում կրբացւի գիւղատնտեսական ուսումնարան։ Այդ մասին պահանջւող բոլոր տեղեկութիւնները ժողովւած են և ուղարկւած շրջանային կառավարութեան։

——

Լրագրապետների IV միջազգային կոնգրէսը Ստոկհոլմում

Ներկայումս Զէդիան գրւել է եւրոպական մամուլի ուշադրութիւնը. բացի նրա մայրաքաղաք Ստոկհոլմի արուեստահանդիսից, ուր այժմ աշխարհի ամեն կողմից այցելուներ են գնում, տեղի ունեցաւ եւ Լրագրողների IV միջազգային կոնգրէսը։ Այստեղ ընտրեցին 1) լրագրական յօդւածների եւ տեղեկութիւնների գրականական սեպհականութեան իրաւունքի, 2) հեռագրների գինը իջեցնելու եւ 3) թղթակիցների միջազգային բիւրո հիմնելու խնդիրները։

Կոնգրէսը վերջանալուց յետոյ միացեալ Զէդ-Նորւեգիայի թագաւոր Օսկար իր պալատում մի ճաշկերոյթ տւեց ի պատիւ կոնգրէսի անդամների։ Հրաւիրւածները՝ 600 հոգի մասնակցեցին այդ խնջոյքին, ուր Օսկար թագաւորը մամուլի միջազգային IV կոնգրէսի ներկայացուցիչների կենաց բաժակի վրայ՝ արտասանեց իր հաճակրական ճառը նրանց։

——

ՄԱՀՓՈՅԺ

—

Գեներալ-լէյտենանտ Բ. Դ. Տէր-Ասատուրեան

Տարաժամ մահը Վիլնայում յուլիսի 2-ին կտրեց եւ հայազգի գեներալ լէյտենանտ *Դմմիտրի Բ. Տէր-Ղասատուրեանի* կեանքի թելը։

Հանգուցեալին պարծանքով կարելի է դասել այն հայ նահատակ զօրապետների շարքին, որոնք ռուսական զէնքի փառքը ապրացրին։ Նա իր գիւղատնտեսական ծառայութիւնը սկսել է Կովկասում. Պաղտասեանի դէմ կռիւների ժամանակ բաւական պատերազմել է եւ փայլուն յաղթանակներ տարել։ Թէպէտ եղել 1873 թւի արշաւանքին եւս մասնակցել է եւ ամեն ժամանակ ցոյց է տւել իր հերոսութիւնը, բէ իբրեւ բաւական եւ բէ գիւղատնտեսի բարեկամ։

Կովկասից գնդ. Տէր-Ասատուրեան ուղարկւեց Կիեւի գիւղատնտեսական շրջանը իբրեւ հատուկ հանձնաժողով հեծելազօր բանակի եւ ապա նշանակւեց ի կարգադրութիւն Կովկասեան զօրաբանակի հատուկ հանձնաժողովի։

Հանգուցեալը լաւ ծանօթ է Թիֆլիսի հայ հասարակութեան եւ նրան մօտից ճանաչողները հատուկ էին նրան ազնիւ եւ բարի գիւղատնտես։ Նա նոյն իսկ Թիֆլիսում եղած ժամանակ վարել է Ն. Հայոց Բարեգործական Ընկերութեան նախագահի եւ փոխ-նախագահի պաշտօնները եւ պակաս աշխատանք չի խնայել այդ Ընկերութիւնը հիմնելու գործում։

Յուսալի է նրա մահը, մանաւանդ որ նա դեռ առոյգ էր։ Նրա մարմինը կտրւի Թիֆլիս, ամփոփելու Վանանց մայր եկեղեցու գաւթում։

Հանգիստ բաջ գիւղատնտեսի եւ ազնիւ բաղաքացու աճիւնին...

——

Խառն լուրեր

Քննութիւնից երեւաց, որ Լոնդոնում թագուհի Վիկտորիայի ադամանդեայ յոբելեանի օրը պատրաստւած է եղել ցոյցի ձևով երկու գաւազրութիւն։

— Վերջապէս Սպանիան անթիւ անհամար զոհեր տալուց յետոյ վճռել է Կուբա կղզում ինքնավարութիւն մրտցնել պարլամէնտով. մինիստրներն էլ տեղացիներից կընշանակւին։

—Կալկաթայում (Հնդկաստան) խռո-

վութիւններ են տեղի ունեցել Եւրոպացիների դէմ, որոնք իբրև թէ Չիտպրում պղծել են մի մէչիտ։ Համարեա բոլոր եւրոպացի ոստիկան օֆիցերները վիրաւորել են, որոնցից մի քանիսը բաւական ծանր։

Յուլիսի 1-ին խռովութիւնները լուրջ չափեր են ընդունել. այստեղ, այնտեղ խմբւել է ամբոխը և եւրոպացիների դէմ ցոյցեր սարքել, քարեր արձակել։ Հնդիկները մասնակցում էին և խռովարար մուսուլմաններին հանդարտում։

Հեռագիրները ցոյց են տալիս, որ այդ խռովութիւնները այժմ գադարել են։

—Nord-ը հաղորդում է, որ նոր յունա-տաճկական սահմանում Տաճկաստանը կըստանայ հազար մէտր լայնութեամբ հող, որի վրայ ոչ մի բնակչութիւն չըկայ։

—Մակեդոնիան հանգիստ չէ. նա տեսնելով որ սուլթանի խոստացած ըէֆորմները չի իրագործւում, ուզում է զինու զօրութեամբ ձեռք բերել։ Մակեդոնիա լրագիրը սպառնում է, թէ Տաճկաստանը այնտեղ կըհանդիպի ոչ վատ զինւած ժողովրդի, ինչպէս այդ եղաւ հայկական շարժումների ժամանակ։ Մակեդոնիայի ապստամբող ժողովրդի մէջ նա կըհանդիպի զօրեղ ալոթեանի, արժանի քաղաքական ազատութեան։ Մակեդոնիա լրագրին կասենք, որ Յունաստանն անգամ, որ պետութիւն է, չարդւեց տաճիկների կրկնապատիկ մեծ ոյժից, ուր մնացին անզէն հայերը, որոնք գործ ունէին տաճիկ զօրքերի և զինւած ամբոխի հետ. բայց մոռանում է նա անյաղթ Չէչէմունը, որի ոյժի առաջ խոնարհեց սուլթանը և եւրոպական պետութիւնների միջոցով հաշտութիւն առաջարկեց։ Չէչէմունցի հայերը իրանց ուզածը ձեռք բերին։

Իսկ Usրանիա լրագիրը հայկական (երևի հայերին) և մակեդոնական բուլղարներին ապստամբութեան է հրաւիրում և իր հրաւէրի վերջում ասում՝ «կամ Բալկանեան թերակղզին պէտք է տեսնենք ծաղկած և երջանիկ, կամ վերափոխած անկեանք անապատի»...

Թղթակցութիւն

Նոր-Բայազէտ, 18 յունիսի.

Տեղս հասանհարիւրաւոր մերկՏաճկաստանցի նորեկ գաղթականներ, որոնք ուղարկւած են Վեհափառ Կաթողիկոսի հրամանաւ։ Ժողովուրդը և հոգևորականութիւնը ընդունեցին այդ թշւառացեալներին գըրկաբաց։

Գաղթականներին կերակրելու և հագցնելու համար ընտրւած է մի մանաւժողով նախագահութեամբ Թ. աւագ քահանայի և երկու անդամների՝ Խ. Բուդուլեանցի եւ Գ. Խաչատրեանի. սրանց արիաջան աշխատութեամբ հաւաքւում է գրամ և հագուստ. առայժմ հարուստները հերթով պէտք է կերակրեն այդ սովածներին։ Բժիշկ Սարգսեանը ձրի դեղ է մատակարարում և օգնութեամբ բժիշկ-ուսանող Հ. Հայրապետեանի՝ միշտ դարմանում է հիւանդներին։ Գաղթականները տեղաւորւած են ուսումնարանի շինութեան մէջ, եկեղեցու գաւթում։

Տ. Տեր-Աբրահամեան

Մեր պատկերները

I

Արաքս խառնւում է Կուր գետի հետ

(Պատմով անցեալը)

Բագրատ Երկրագործ գաղի բնական հարստութիւնից, ունի եւ սխալչելի վայրեր, ոչ պակաս շինի եւ հետաքրքրական քան Հռչակաւորները։ Գնացեք Բագրատկապից ծովով մինչեւ Բոժի-Պռոմբել, այստեղից Սալիանի, տեսեք թէ ինչպես Մայր Արաքս իր արտասուքները խառնում է իր քոյր Կուրի հետ։ Այնտեղից կառով կարելի է գնալ երկաթուղու Հաջի-Զաբուլ կայարանը եւ այստ մի քանի ժամից կրկին Բագրատկապ եք։ Դարեւանի ու աշնանը մանաւանդ գեղեցիկ են այդ կողմերը։ Սակայն մենք համոզւած ենք, որ հարիւր չխուռն հազար հոգի ունեցող Բագրատ իր բնակիչներին մի այնպիսի պայմանների մէջ է պահում, որ այդ տեսակ հոգեզմայլ հրճուանքներ նրանք անկարող են կատարել եւ Բորժոմի տեղ ափերը երբեք չեն փոխի Արաքսի գրկախառնուման ընձեռաւոր խորհրդաւորութիւններ նորելուկ ռոպեներն նրանք երբեք չեն գերադասիլ կնոջ քաղաքակիրթ հանդիստից...

Ջաւադից դէպի շրջեանն անկարող է իր ճանապարհը շարունակել, որովհետեւ այստեղի խիտ բուսականութիւնը, վիթխարի ծառերն իրանց ետիւղերը երկու ափից միմեանց ընդգրկած ու Արաքսի կապոյտ, բայց կատաղի ալիքները խոչընդոտել են շրջեանի արշաւին։ Պատմը միացնում է Արաքսի երկու ափերը եւ փոխարինում կամուրջին։ Զրնայած նրան, որ Արաքսն ու Կուրը համարեա մի երկարութիւն ունին, սակայն Մայր Արաքսը տանեներ անգամ Կուրից արշնքաց է, աւելի է յօրանջ տալիս եւ ձիշտ բանաստեղծի խօսքերին՝

Արաքս, ի՞նչու ձկանց հետ պար չես բռնում մանկական,

Դու դեռ ծովը չըհասած սգաւոր ես ինձ նման...

ամապարում է իր դարեւոր վիշտը թաղել ծովի անդունդում։

Արաքսն *իր սկիզբն առնում է* Խոր-Վիրապից *բաւական բարձր, ու այցելով* Այրարատեան *աշխարհի բեկոր բնկոր, արիւնաշաղաղ ս. Վայրերը, ժողովում է սգաւորների արտասուքը ու կատաղի ալիքներով դժբախտ Կուրի հետ թափւում կասպից ծովը։*

II

Իջիգենիան Տաւրիդում.

Կանոդի նկարից

Գիտէք Իջիգենիան Տաւրիդում հռչակաւոր սեղծագործութիւնը շատ նկարիչների հետաքրքրական հարուստ նիւթ է մատակարարում։

Կանոդի նկարը, որ տպագրւում ենք Տարազում, հրաշալի է։ Տաւրիդի դաշտավայրը անհնարին, բանաստեղծական դիրքով բացւում է մեր առաջ. հեռւում՝ ծովի կողմից՝ կանաչների մէջ բաւած երեւում են Արտեմիդ տաճարի մարմարեայ սիւները. վերջապես ահա տանջող Իջիգենիայի ուրւականը յուզնում է այդ վայրի, բանաստեղծական պկղաժի պատկառը։ Իջիգենիան, որ Ագամեմնոնի աղջիկն էր, պետք է զոհւեր աստւածներին, բայց աստւածուհի Արտեմիդը ազատեց նրան եւ բագդրեց իր Տաւրիդի տաճարում, որտեղ Իջիգենիան երկար ժամանակ իշխեց մնաց։

Նկարիչը դուրս է բերել Իջիգենիային այն մոմենտում, երբ նա հանգիստ իջնում է դէպի ներքեւ—ծովի ափը։ Նա խորհի վշտակցութեամբ կոտրում է իր ձեռքերը եւ հայեացքները հեռու սեւեռելով, ի զուր է ձգտում տեսնել իր հեռաւոր հայրենիքի լեռնե՞րը, դաշտե՞րը...

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ժրնեւ. Տ. Ս. Faust-ի մասին Ձեր խոստացած աշխատութիւնն ուրախութեամբ կըստպագրենք. նոյնանման կլասիկ պիէսների անալիզ նոյնպես շատ ցանկալի է։ Սիրայն կարելիին չափ ամփոփ։

Լոնդոն. Տ. Աւելի շնորհակալ կլլինէինք, եթէ ամբոխը երկու անգամ Ձեր բղթակցութիւններում ընդ. հատուած. հարցերն էլ լինէին շօշափւած։

,, **Ս.. Լ.** *Սաֆո* պոէմը ոչինչ կապ չունի *Ալկիսանդրոպոլից պ. Ե. Կ.* մեր խնդրած *Սաֆոյի* քնագրի հետ։ Դա մի պրոզական գրւածք է *Տարազի* մի երես, որ պատճի Թիֆլիս եղած ժամանակ յանձնել էիք նրան բարգմանելու. նա պատկերի նկարագիր է։

Վելիկոկնեաժեսկայա. Ե. Զ. Երբ մեր թերթի №-ը կամ պրեմիան պոստից յանձնում են Ձեզ փչացած, կամ թրջւած, պատառոտւած, Դուք պէտք է չ'ընդունէք եւ պահանջէք պոստից յետ ուղարկեն եւ մեզ ուղարկեն։ Համաձայնեցէք, որ խմբագրութիւնը չէ կարող աշխարհիս ծայրերը իր սեպհական գրիչները ամեն շաբաթ ուղարկել իր թերթերը բաժանելու համար։ Պոստը իմը պատասխան է մեզ ուղարկեցիք։

Ղուբա. Զ. Ե. Ուղարկւած է այդ №-ը Ձեզ, ունենք Թիֆլիսի պոստասնից ստացական. կրկին ուղարկեցինք Ձեզ, սակայն Ձեր նամակն էլ մեր պահանջի հետ հետկայացրինք փոստ-հետ. գոտեհետակը եւ չըգիտենք ինչ բնութիւնից յետոյ ինչպէս

պէտք է արդարանայ Ձեր խղճի պոռտատան այն ծառայողը, որ Ձեզ հաւատացրել է, թէ այն №-ը չի ստացած: Ասելն հեշտ է, իսկ ապացուցանելը դժւար:

Բալախանի. Ս. Ն. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 35 կ. մարկա:

Նոր-Բայազէտ. Տ. Ս. Անպայման ընդունում ենք, որ Ձեր ուղարկած ներքումը տպագրելով մենք հրապարակ հանած կլինենք, թէ ինչպէս անազնիւ մարդիկ անձնական շահերից միայն դրդած զրպարտում են արժանաւոր գործիչին եւ հոգեւորականին, բայց այնու ամենայնիւ մենք անկարող ենք տպագրել այդ ներքումը: Դիմեցէք այն թերթին, որ զրպարտել է ուղար գործչին: Մեր ձգտումները չեն պատռտելայներին պատսպանել, այլ մենք չանում ենք ցանել այնպիսի սերմեր հայ ժողովրդի մէջ, որ նրանք ետամուտ, ինքնահաւան հային կերպարանափոխեն եւ վերածնեն առաքինի, ազնիւ, օժտած բարոյ եւ գեղեցկի գաղափարով հայ, իր ետը մոռացած, նրբմարտութեան շաւղով ընթացող մարդ:

———

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

—

Շոքերի պատճառով ներկայ յուլիսի 1-ից մինչև առաջիկայ սեպտեմբերի 1-ը Աղբիւր Տարազի խմբագրութեան գրասենեակը բաց է առաւօտեան ժամի 11-ից մինչև կէսօրից յետոյ ժամի 1-ը: Տօն և կիրակի օրերը բոլորովին փակ են խմբագրութիւնը և գրասենեակը:

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրուած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր և Տարազի 96 և 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ, Аглюръ կամ Таразъ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ

մասին մի աշխատութեան համար հարկաւոր են հետեւեալ տեղեկութիւնները.

Ա. ամուսնութեան դէպքեր առաջոյ կարգի պայմաններում. Բ. ընտանեկան նշանաւոր խռովութիւններ եւ դրանց արդիւնքը. Դ. ապահարզանի դէպքեր—դրանց շարժառիթները, հետեւանքները, վերջնական ելքը: Հոգեւոր իշխանութեան րնձած դիրքը այդ գործում, նրա վճռի մոտիվները եւ այլն մանրամասնութիւններ այդ խնդիրների վերաբերմամբ:

Բացի այդ, մի շարք կանանց կարծիքներ ամուսնութեան մասին. թէ ինչպէս էին մտածում ամուսնութեան մասին օրիորդ ժամանակում, ինչ տեսակ էին պատկերացնում ամուսնութիւնը, ինչ պարտականութիւն էին զգում այն ժամանակ ամուսնութեան չթ վերաբերեալ, յետոյ ինչը ինչպես գտան, ո՞րն է իրանց կարծիքով բախտաւոր եւ օրհնաւոր ամուսնութիւնը ինչ եւ ինչ էր պակասում իմանալ իրանց նախ քան ամուսնանալը եւ այլն եւայլն:

Մի խօսքով այս խնդրի մասին բազմակողմանի տեղեկութիւններ:

Հաւատացած ենք, որ ձեռնհաս անձինք եւ մեր յարգելի տիկիններ չեն զլանալ այս գործում մեզ օգնել:

Հասցէն՝ Баку до востребованія Рубену Оганджанянъ.

Ռ. Յովհաննէսեան

Зуболѣчебный Кабинетъ Д-та Кавказскаго Офицерскаго Экономическаго общества Ю. А ФРАНКЪ. Лѣченіе, пломбированіе, извлеченіе и вставленіе искусственныхъ зубовъ. Пріемъ больныхъ отъ 9-хъ час. утра до 7-ми часовъ вечера.

Головинскій пр. д. Сергѣева № 7

10—9

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ):

Հիւանդներին ընդունում են ամեն օր. բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐՔ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

ԿԻՆ-բժիշկ ԹՈՒՆԱՅԻՎԱ ՐՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐՔ՝

ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիս, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ քիմիական և խոշոր բացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Թարգմանւում է

Մեբասիան Կնայպի „МОЕ ЧУДЕСНОЕ ВОДОЛѢЧЕНІЕ“

հեղինակութիւնը:

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	Ր.	Կ.
ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ 4 գոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ.	1	25
ՍԱՍՈՒՆՑԻ ԿԵՆԴԱՆԻ—Ծերենցի Երկումբ IX դարու (սակաւաթիւ) .	2	—
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . .	1	—
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . .	—	30
ՍՐԻՆԳ. Բնութեան երգեր և հանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	—	50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ճենապակու վրայ պատկերը (սակաւաթիւ) . . .	10	—
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը 6 ր. փոխ.	4	—
ԲԵՐԿՐԱՆՔ, խրօմօ-ակւարել, ՈՒՆՓԱՅԵԼԻ Մադօնաներ, հրեշտակներ, ՐՈՒԲԵՆՍԻ Յիսուս և Տիրամայր, ՀԻՔՍՊԻՐԻ խրօմօ-ջուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն .	—	60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ մեծադիր փօտօ-դրաւիւր պատկերը .	1	20
ՀԱՐԻՄԻ ՂԱԶԻԿԸ ոսկէ շղթաներում	—	50
ՄԱՅՐԻԿԻ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1	30
ՀՄԵՌ	—	20
ԱՐՏԱՂԻՍ Ռ. թագաւորի մուտքը ի Հռոմ.	—	30

Дозв. цензъ. Тифлисъ, 5 іюля 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.